Վերապատրաստողկազմակերպություն

ՀՀ ԿԳՄՍ «Մարտունու Տ. Աբրահամյանի անվանավագ ենթակա ուսուցիչների վերապատրաստում»

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ «ՈՒսուցչի առարկայական և մասնագիտական գիտելիքների և հմտությունների կատարելագործումը ստեղծագործական և հետազոտական աշխատանքների ընթացքում»

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ ՎԱՐԴԵՆԻՍ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲԵՅԲՈՒԹՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՈՒՍՈՒՑԻՉ՝ ՀԱԿՈԲՅԱՆ ԿԱՐԻՆԵ

«Վարդենիսի Էդ. Պողոսյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց»

ՎԱՐԴԵՆԻՍ-2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3
ՀԻՄՆԱՄԱՍ
§1.Գրական ակնարկ.....6
ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ.....10
§2.Փորձարարական ուսուցում և արդյունքների վերլուծություն.....11
§3.Փորձարարական դաս-1.....12§4.Փորձարարական դաս-2.....13
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....14
Գրականության ցանկ.....15
Հավելված.....16
1.Դասապլան-1.....16
2.Դասապլան-2.....22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի կրթական համակարգում ընթացող բարեփոխումների արդյունավետությամբ է մեծապես պայմանավորված մեր երկրի ապագա զարգացումը: Կրթական բարեփոխումների խելամիտ իրականացումը և արդյունքները էլ ավելի կարևոր են, եթե հաշվի առնենք, որ դրանք (Կրթակարգ, հանրակրթության պետական չափորոշիչներ, դասագրքեր, ուսուցիչների մասնագիտական զարգացում, ավագ դպրոցի ձևավորում) գերազանցապես իրականացվել են ելնելով միջազգային չափանիշներից և ենթակա են անընդհատ զարգացման: Հայաստանի ապագան լրջորեն կվտանգվի, եթե կրթական բարեփոխումների արդյունքում չձևավորվի արժեքավոր մարդկային կապիտալ, որը կկարողանա զարգացնել երկրի տնտեսությունը:

Միջազգային փորձը վկայում է, որ կրթության ոլորտում հաջողության հասնելու համար կարևոր է ունենալ բարձրակարգ ուսուցչական կազմ և ժամանակի պահանջներին համապատասխանող, աշակերտների սովորելու ցանկությունը խթանող մեթոդաբանություն: Եթե կրթական համակարգը չունենա բարձրակարգ մանկավարժական կազմ և որակյալ ուսումնական բովանդակություն, ապա հասարակությունը իր կրթական պահանջմունքները բավարարելու է դպրոցից դուրս, իսկ վերջինս դառնալու է ձևական և անարդյունավետ հաստատություն[1]:

Ներկա փուլում կրթության հիմնական խնդիրն է պատրաստել բարձր որակավորում ունեցող ուսուցիչ, ով կարող է շարունակաբար կատարելագործել իր հմտությունները, շարժուն կերպով արձագանքել աշխարհում տեղի ունեցող փոփոխություններին: Կրթության վիճակը որոշող առանցքային գործիչը ուսուցչի անհատականությունն է: Աշակերտների հաջողության արդյունքները ուղղակիորեն կախված են նրա

[1]https://www.moj.am/storage/uploads/00.Ardir_6.pdf

մասնագիտական կոմպետենտության մակարդակից, մասնագիտական զարգացման կարողությունից, անձնական որակներից:

Այսպիսով, տվյալ հետազոտական աշխատանքում մեր նպատակն է հանդիսանում նոր մեթոդներով փորձարարական դասերի օրինակների ներկայացումը, որտեղ ուսուցչի մասնագիտական զարգացման ուղղությունը կհամընկնի զարգացման անձնական կարիքի հետ. ուսուցչի մասնագիտական իրավասությանը ներկայացվող պահանջներով, ժամանակակից դպրոցական համակարգի կարիքներով:

Ուսուցչի պրոֆեսիոնալիզմն այսօր դիտարկվում է որպես կրթության ժամանակակից որակի հասնելու պայման: Այս խնդրի լուծումը ներառում է ուսուցչի ընդգրկումը շարունակական կրթության համակարգում մանկավարժական ողջ գործունեության ընթացքում, երբ ընթացքի մեջ է մասնագիտական կարողությունների ձևավորումն ու կատարելագործումը[2]:

2 https://nsportal.ru/shkola/tekhnologiya/library/2019/08/20/sovershenstvovanie-professionalnyh-kompetentsiy-uchitelya-kak

ՀԻՄՆԱՄԱՍ

§1.Գրական ակնարկ

Ժամանակակից ուսուցչի պրոֆեսիոնալիզմը որոշվում է նրա մասնագիտական համապատասխանությամբ,ինքնորոշմամբ,ինքնազարգացմամբ, այսինքն՝ նա կրում է այն նպատակային ձևավորված որակները, որոնք անհրաժեշտ են մասնագիտական գործունեության իրականացման համար: Ժամանակակից ուսուցչի տարբերակիչ հատկանիշներն են մշտական ինքնակատարելագործումը, ինքնաքննադատությունը, էրուդիցիան և աշխատանքային բարձր կուլտուրան: Ուսուցչի մասնագիտական աճն անհնար է առանց ինքնակրթական կարիքի: Իմ ընկալմամբ՝ «ուսուցչի մասնագիտական կոմպետենտությունը» նախևառաջ հենց ուսուցիչն է, ով գիտի, թե ինչպես կազմակերպել իր մասնագիտական գործունեությունը բարձր մակարդակով, մեծ հետաքրքրություն է ցուցաբերում սեփական մասնագիտական զարգացման, նոր գիտելիքներ ձեռք բերելու և յուրացնելու նկատմամբ: Ուսուցչի մասնագիտական կարողությունը մանկավարժական և կրթական խնդիրների լավագույն լուծման համար գիտական և գործնական գիտելիքների կառուցման հմտությունների մի շարք է:

Օտար լեզվի ուսուցչի մասնագիտական իրավասության հիմնական ցուցանիշները ներառում են հաղորդակցական և միջանձնային հաղորդակցությունը զարգացնելու ունակության անհրաժեշտությունը, որի բաղադրիչներն են հանդիսանում նաև գործնական, թեմատիկ, սոցիալ-մշակութային, կրթական և ճանաչողական կարողությունները[3]:

---

[3]Ананьев Б.Г. Человек как предмет познания. СП.: Питер, 2001. 272 с.

Հաղորդակցական իրավասությունը ներառում է ոչ միայն այնպիսի անձնական հատկությունների ձևավորում, ինչպիսիք են այլ մարդկանց հետ լեզվական փոխգործակցության հնարավորությունները, այլև աշակերտների գործնական հմտությունների զարգացումը, նրանց ուսումնական գործունեությունը կառավարելու կարողությունը:Օտար լեզվի ուսուցչի ինքնակատարելագործման իրավասության գործիքներից մեկը դասի ինքնավերլուծությունն է: Հենց նա է հնարավորություն տալիս ձևավորել և զարգացնել ստեղծագործական գիտակցություն, որն արտահայտվում է իր գործունեության և աշակերտների գործունեության նպատակները ձևակերպելու և սահմանելու ունակությամբ:

Օտար լեզվի՝ մասնավորապես անգլերենի դասին աշակերտի գործունեության հաջողությունը կախված կլինի նրանից, թե ուսուցիչը որքանով է կազմավորել ուսման և ինքնուսուցման մոտիվացիոն հիմքը: Դրանում մեծ դերակատարություն ունի ուսուցչի տեղեկատվական տեխնոլոգիաների կոմպետենտությունը: Այս իրավասության ցուցանիշներն են համակարգչային գրագիտության տիրապետումը՝ անհրաժեշտ տեղեկատվության որոնման և օպերատիվ մշակման համար, ժամանակակից դասավանդման տեխնոլոգիաների տիրապետումը:

Ի՞նչ մասնագիտական որակներ պետք է ունենա ուսուցիչը, որպեսզի կարողանա իր ոլորտում գրագետ լինել:Իմ կարծիքով, օտար լեզվի ուսուցչի մասնագիտական իրավասությունը ներառում է.

- ժամանակակից նորարարական մանկավարժական տեխնոլոգիաների տիրապետում,
- դասավանդման ակտիվ մեթոդներ
- դասավանդման ինտերակտիվ մեթոդներ
- առաջադեմ մանկավարժական փորձ.

Ժամանակակից պահանջները հաշվի առնելով՝ ուսուցիչը պետք է ունենա.

•ընդհանրացնելու ունակության ձևավորում:
•դաս նախագծելու ունակության ձևավորում
•աշխատանքի ներդաշնակություն

• դասը վարելու կարողություն
•ստեղծագործական ներուժի բացահայտում՝
•սեփական մանկավարժական փորձը համակարգելու

Ի՞նչ պետք է կարողանա անել իրավասու ուսուցիչը:

– հաջողությամբ լուծել խնդիրները՝ ցուցաբերելով նախաձեռնություն, անկախություն և պատասխանատվություն.

– կողմնորոշվել և հասկանալ, թե աշակերտներին ինչ հմտություններ են անհրաժեշտ ժամանակակից պայմաններում աշխատանք գտնելու և մասնագիտական հաջողության սանդուղքով հաջողությամբ բարձրանալու համար.

– տեսնել և հասկանալ իրաշակերտների իրական կենսական հետաքրքրությունները.

– հարգանք ցուցաբերել իր աշակերտների, նրանց դատողությունների և հարցերի նկատմամբ.

– զգալ ուսումնասիրվող իրավիճակների խնդրահարույց բնույթը.

– ուսումնասիրված նյութը կապել առօրյա կյանքի, ուսանողների հետաքրքրությունների հետ.

– համախմբել գիտելիքները ու հմտությունները կրթական և արտադպրոցական պրակտիկայում.

– պլանավորել վերապատրաստման դասընթաց՝ օգտագործելով կրթական աշխատանքի ձևերի և մեթոդների ամբողջ բազմազանությունը, և, առաջին հերթին, անկախ աշխատանքի բոլոր տեսակները, երկխոսական և նախագծային–հետազոտական մեթոդները.

– սահմանել նպատակներ և միասին գնահատել ձեռքբերումների աստիճանը.

– վարժ տիրապետել «հաջողության իրավիճակի ստեղծման» մեթոդին.

– հիմնվել անցյալի փորձի վրա՝ ստեղծելով նոր փորձ՝ առանց ժամանակ կորցնելու.

– փորձագետներ և մասնագետների հետ ճնարկելու այն հարցերը, որոնցում ինքը բավականաչափ կոմպետենտ չէ.

– գնահատել աշակերտների ձեռքբերումները ոչ միայն գնահատականով, այլև իմաստալից հատկանիշով.

– գնահատել ոչ միայն առարկայական ձեռքբերումները, այլև անձնական որակների զարգացումը.

– տեսնել բացեր ոչ միայն գիտելիքի, այլեւ հասարակության մեջ ապրելու պատրաստակամության մեջ:

Կուզենայի նաև հավելել, որ անգլերեն լեզվի առարկան, ինչ էլ ասեն, բավականին բարդ է, և սովորելու ցանկությունը պետք է մշտապես խթանել: Հասկանալի է, որ դասը թատերական բեմադրություն չէ, որտեղ գլխավոր հերոսը ուսուցիչն է: Այստեղ ուսուցիչը պետք է մի կողմ քաշվի և խաղա այնպիսի դեր, ով երեխաներին անկատ կերպով տանում է դեպի ինքնուրույն գործունեության, բայց միշտ ուսուցչի հսկողության ներքո և այս վերահսկողությունը չպետք է լինի տոտալիտար և ճնշող:

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

§2.Փորձարարական ուսուցում և արդյունքների վերլուծություն

Գաղտնիք չէ, որ ժամանակակից աշխարհում ընթացող փոփոխություններն առաջ են բերում նորագույն մարտահրավերներ, որոնք իրենց արտացոլումն են գտնում նաև կրթության ոլորտում, և առավելապես, դասավանդման գործընթացում՝ խրախուսելով մանկավարժներին լինել առավել ստեղծագործ, ճկուն և նորարարական: Այս ամենից, բնականաբար, անմասն չի մնում նաև օտար լեզվի դասավանդումը՝ուսուցչի առաջ խնդիր դնելով դասապրոցեսը դարձնել առավել աշակերտակենտրոն ու ինտերակտիվ:

Փորձարարական ուսուցման նպատակը.

- պարզել մշակված առաջադրանքների արդյունավետությունը աշակերտների ուսումնառության մոտիվացիայի խթանման գործընթացում,
- ստուգել աշակերտների ներգրավվածության և անգլերեն լեզվանյութի յուրացման դյուրինության մակարդակը ներդրված մեթոդների շրջանակներում:

Փորձարարական ուսուցումն անցկացվել է 2022թ.փետրվարի 7 -ից մարտի 18-ը Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի Էդ. Պողոսյանի անվան թիվ 2. հիմնական դպրոցում:

Փորձարարական ուսուցմանը մասնակցել են վերոնշյալ դպրոցի 30 աշակերտ.

- 8-րդ դասարան՝ 14 աշակերտ,
- 9-րդ դասարան՝ 16 աշակերտ:

Փորձարարական ուսուցման նյութերը կազմվել են 8-րդ և 9-րդ դասարանների առարկայական ծրագրով նախատեսված թեմատիկ նյութին համապատասխան: Ուսուցման ընթացքում բոլոր աշակերտների համար ապահովվել են հավասար պայմաններ:

Մեր կողմից ներկայացվող փորձարարական մեթոդները իրականացվել են 8-րդ և 9-րդ դասարաններում, սակայն կարող են քիչ փոփոխություններով ներդրվել այլ դասարաններում ևս: Հիմք ընդունելով նախագծահեն, բովանդակահեն մեթոդները՝ դրանցից յուրաքանչյուրի սկզբունքներին համապատասխան առաջադրանքներ մշակելով փորձել ենք ստեղծել միջառարկայական կապեր, խթանել աշակերտների կողմից լեզվի կիրառմանը իրական կյանքի իրավիճակներում՝ հենվելով մեթոդներից յուրաքանչյուրի համար ձևակերպված հստակ նպատակների ու խնդիրների վրա:

Ստորև ներկայացնում ենք նախագծահեն մեթոդի՝ **PROJECT BASED LEARNING** կիրառումը 8-րդ դասարանում՝ տվյալ դասարանի աշակերտների հետաքրքրություններին և հմտություններին համապատասխան դասի շրջանակներում:EFL-ի շատ համատեքստերի նման, PBL-ը նորություն չէ

անգլերենի ուսուցման և սովորելու հարցում: PBL-ի հիմնական նպատակը, ինչպես ցանկացած այլ մեթոդաբանության, աշակերտների ուսուցման բարելավումն է: Տարբերությունը կայանում է նրանում, թե ինչ սպասելիքներ ենք մենք ունենում PBL-ի հետ կապված. PBL-ով մենք փորձել ենք մի քանի աստիճան վեր բարձրանալ դասական մեթոդաբանության տաքսոնոմիայի մեջ՝ հիշողության գիտելիքների ուսուցման կենտրոնը տեղափոխելով դեպի գիտելիքների կիրառում:Այսինքն՝ PBL-ը կարող է արդյունավետ միջոց լինել անգլերենը որպես օտար լեզու դասավանդելու համար, այն կարող է հաջողությամբ կիրառվել աշակերտների շրջանում, ովքեր մինչ այդ ենթարկվել են ուսուցման ավանդական մեթոդներին:

Այսինքն՝ նախագծի վրա հիմնված գործունեության իրականացման հետ կապված ամենահետաքրքիր բացահայտումն այն է, որ աշակերտներն իրենց նախագծերում կարողանում են գտնել լեզվական հմտությունների, տեղեկատվական գիտության և տեխնոլոգիաների հմտությունների հավասարակշռված օգտագործումը.

Ներկայացնենք լավագույն չորս խորհուրդները արդյունավետ PBL-ի համար.

Օրագիր պլանավորման. Ինձ կարևոր է աշակերտներին տալ իրենց գործունեությունը ընտրելու ազատություն, ոմանք ավելի շատ ուղղորդման կարիք կունենան: Առաջադրանքները կարող են պլանավորվել նաև ավելի քիչ վստահ աշակերտների համար:

- ստուգաթերթերը և դասակարգումները օգնում են ապահովել ուսուցման արդյունավետությունը և պահանջվող հմտությունները:
- անհրաժեշտ է մտածել ավանդական ուսուցման շրջանակներից դուրս գալով և խրախուսել աշակերտներին անել նույնը: Լրացուցիչ գնահատականներ շնորհել նորարար գաղափարների համար:
- ցուցադրել աշակերտների աշխատանքը և հարթակ տալ նրանց՝ իրենց ձեռք բերածը ներկայացնելու համար:

Հաջորդիվ քայլ առ քայլ դիտարկվում են նախագծի ներդրման և կատարման գործընթացը 8-րդ դասարանում:

Թեմա՝ **"Cultural Palette"**

Դասարան՝8- րդ

Դասի տիպը՝ համագործակցային, գիտելիքների հմտությունների ձևավորման դաս:

Դասի նպատակը՝

- ընդլայնել և ամրապնդել գիտելիքները ու հմտությունները տարբեր ոլորտներից ավելի բարդ և բազմամասնագիտական առաջադրանքի միջոցով,
- զարգացնել թեմայի շուրջ հաղորդակցական հինգ կարողունակությունները (ունկնդրումը, մենախոսությունը, ընթերցանություն, գրավոր խոսք, փոխներգործություն)
- զարգացնել աշակերտների կարողությունը՝ տարբերակելու, թե որ տեղեկատվությունն է հուսալի և որը՝ ոչ,ինքնավար ուսուցման, հետազոտության և տեղեկատվության որոնման համատեքստում,
- զարգացնել աշակերտների թիմային աշխատանքի կարողությունները,
- խթանել աշակերտների ինքնագնահատման և ինքնաքննադատության զարգացմանը:

Դասի ընթացքում կիրառվող մեթոդները և իրականացման եղանակները՝ փոխներգործուն; «մտագրոհ» մեթոդ; խմբային աշխատանք; ինքնուրույն ճանաչողական գործունեություն

Անհրաժեշտ նյութեր և պարագաներ՝ պաստառներ, ինտերնետ կապ, համակարգիչ, պրոյեկցիոն լապտեր, սահիկաշարեր

Միջառարկայականկապեր՝ մշակույթ; հասարակագիտություն; բնագիտական առարկաներ; տնտեսագիտություն

Ակնկալվող վերջնարդյունքներ.

Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝

- թեմային առնչվող բառապաշարը,
- ներառված երկրների ավանդույթների մասին որոշ մանրամասներ,

Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա՝

- կարդալ և հասկանալ երկրի ավանդույթների կարևորությունը,
- կատարել ինքնուրույն հետազոտություն՝ փորձելով վեր հանել առավել հետաքրքրաշարժ և ուշագրավ դրվագները,
- կատարել աշխատանքի և ժամանակի արդյունավետ դերաբաշխում,
- պատրաստ լինել առավել երկար նախագծերի, միջազգային մրցույթների (օրինակ՝ Technovation, Science for Girls) և սեփական ստարտափների նախագծմանը:

Աշակերտները նախագծում և ստեղծում են ներկայացվող հինգ երկրների ՝ Հայաստան, Մեծ Բրիտանիա, Իսպանիա, Իտալիա, Ֆրանսիա, ավանդույթների գիրք: Աշակերտները նաև քայլ առ քայլ հրահանգներ են գրում իրենց գրքերի նմուշները վերարտադրելու համար: Ուղղությունները տպագրվում են հատուկ ցուցակում, որը բաժանվում է մյուս աշակերտներին:

Նպատակային դրվագ

Նախագծել յուրահատուկ գիրք, գրել և հրապարակել յուրաքանչյուր մասը պատրաստելու ցուցումները:

Ուսուցման նպատակներ աշակերտների համար.

- սովորել ստեղծագործ մտածել և ստեղծել գրավիչ արվեստի գործեր, կամ սովորել, թե ինչպես գրել հստակ ցուցումներ և նյութերի հարցումներ,
- սովորել, թե ինչպես պետք է ուշադիր պլանավորել,
- սովորել տալ և ստանալ հետադարձ կապ:

Նախագծի ներկայացում

Դասապրոցեսը սկսեցինք՝ բացատրելով ծրագրի նպատակները և վերանայելով ծրագրի ստուգաթերթը, որը հստակ ուրվագծում է յուրաքանչյուր երկրի խորհրդանիշ հանդիսացող ավանդույթների պլանավորման, պատրաստման և գրելու գործընթացի յուրաքանչյուր քայլը:Այնուհետև աշակերտները ուսումնասիրեցին յուրաքանչյուր երկրում շատ օգտագործվող նյութերը, որոնք նրանք օրինակի համար կարող են հետագայում օգտագործել:

Պլանավորում

Դասի առաջնային փուլում աշակերտները բաժանվեցին խմբերի, ապա նրանց հետ միասին մոդելավորեցինք, թե ինչպես ուրվագծել գրքերի դիզայնը և գրել դիզայնի համար նախատեսված նյութերի ցանկը: Աշակերտների խմբերը ուրվագծեցին իրենց նախագծային գաղափարները, ապա ընտրեցինք մեկը և գրեցինք նախընտրած օգտագործվելիք նյութերի ցանկը:

Հետադարձ կապ

Աշակերտների խմբերը միմյանց և/կամ մեզ հետ կիսվում էին իրենց էսքիզներով և նյութերի ցուցակներով և ստանում արձագանքներ:

Վերանայում

Անհրաժեշտության դեպքում աշակերտները կարող էին վերանայել իրենց դիզայնի գաղափարները և նյութերի ցանկը:

Դիզայնի ստեղծում

Աշակերտները հավաքեցին իրենց նյութերը և սկսեցին պատրաստել իրենց գրքերը:

Գրելու հրահանգները

Յուրաքանչյուր խմբի հետ միասին որոշեցինք և մոդելավորեցինք, թե ինչպես գրել հրահանգները: Այնուհետև աշակերտները գրեցին մանրամասն, քայլ առ քայլ հրահանգներ ստեղծագործական գիրքը ստեղծելու համար:

Հրահանգների ստուգում

Աշակերտները իրենց խմբերում ստուգեցին միմյանց հրահանգները՝ փորձելով վերստեղծել դիզայն՝ պարզապես հետևելով ուղղություններին: Գրքերի պատրաստման հետ կապված խնդիրները ստուգվեցին՝ պարզություն մտցնելու համար և, անհրաժեշտության դեպքում ևս մեկ անգամ կարող էին վերանայվել: Ստուգվեցին նաև հստակության, բերականության և ուղղագրության ուղղությունները:

Վերջնական նախագծի պատրաստում

Աշակերտները օգտագործել էին համակարգիչ կամ ուշադիր վերաշարադրել ձեռագիր տարբերակը:

Գրքի ստեղծում.

Յուրաքանչյուր աշակերտական խումբ ստեղծել էր իր գիրքը՝ իր գծանկարով կամ լուսանկարով, նյութերի ցանկով և գրքում ընտրված երկրի ավանդույթները ներառելու քայլ առ քայլ հրահանգներով: Գրքերը ցուցադրեցինք մյուս աշակերտներին, ուսուցիչներին և ծնողներին:

Դասարանային գործունեությունը

Ինչպես նախագծերի մեծ մասի դեպքում, հետևողական քայլերը ստեղծում են ինքնուրույն դասարանային միջավայր: Տվյալ նախագծի յուրաքանչյուր հանդիպում սկսվում էր մեծ խմբի հանդիպումով, որի ընթացքում բաժանվում էին ստուգաթերթեր: Աշակերտներին առաջարկվում էր լրացնել ստուգաթերթը, երբ նրանք առաջադիմում էին ծրագրի քայլերի միջով:

Աշակերտները գրում, նկարազարդում և հավաքում էին տեղեկություններ իրենց նախընտրած երկրի ավանդույթների հետաքրքրություն ներկայացնող թեմաներով: Նրանք կարող էին ստեղծել մեկից ավելի գրքեր, և նրանք կարող են համագործակցել այլ աշակերտների հետ գրքեր ստեղծելու համար:

Գնահատումը

Քանի որ աշխատանքը ստեղծագործական էր, անհրաժեշտ էր նաև ստեղծագործական գնահատման մոտեցում: Խմբային քննարկման արդյունքում մենք մշակեցինք այն հատկանիշների ցանկը, որոնք գիրքը դարձնում են «լավը» և ընտրեցինք մի շարք չափանիշներ իրենց գրքերի համար: Վերջնական ցուցակը փակցվեց դասարանում: Ըստ այդմ, մշակվեց բալային հետևյալ սանդղակը, որն ընդգրկվում էր հետևյալ 4 չափանիշները.

1. Ինֆորմացիայի տրամաբանական հաջորդականություն – 2 միավոր.առավելագույն միավոր ստանալու համար ինֆորմացիան պետք է համակարգված լիներ հստակ, տրամաբանական ձևով, 1,5 միավոր՝ եթե ինֆորմացիայի մեծ մասն էր համակարգված, և 1 միավոր՝ եթե վերոնշյալ չափանիշը ընդամենը որոշ չափով էր պահված:

2. Գրքի ձևավորում – 3 միավոր.առավելագույն միավոր ստանալու համար գրքի արտաքին տեսքն ու գրաֆիկան պետք է լինեին ճիշտ ընտրված և համապատասխանեին թեմային, 2 միավոր՝ եթե որոշ տարրեր այնքան էլ գրավիչ չէին, բայց համապատասխանում էին թեմային, և 1 միավոր՝ եթե գրաֆիկական պարամետրերը գրավիչ էին, սակայն թեմային անհամապատասխան:
3. Ուղղագրություն և քերականություն – 2 միավոր. առավելագույն միավոր, եթե պատրաստված գրքում չկային ուղղագրական կամ քերականական սխալներ, 1,5 միավոր՝ եթե առկա էին 2-3 ուղղագրական սխալներ, և 1 միավոր, եթե կային մի քանի ուղղագրական և քերականական սխալներ,
4. Աշխատանքի ներկայացում - 3 միավոր. առավելագույն միավոր, եթե աշակերտի խոսքը սահուն էր, խոսքի տեմպն ու տոնայնությունը ճիշտ ընտրված, խոսքը ինքնաբուխ էր և չկային քերականական սխալներ, 2 միավոր, եթե խոսքի տեմպը մի փոքր արագ էր կամ դանդաղ, ընդհանուր առմամբ պահված էին քերականական կանոնները, սակայն օգտվում էին հուշարար թերթիկներից, և 1 միավոր, եթե խոսքն ընդհանուր առմամբ պատշաճ էր, սակայն առկա էին քերականական սխալներ և հաճախ էին օգտվում հուշաթերթիկից:

Առաջին խումբը գնահատվեց գերազանց , քանի որ գրքի համար ընտրված նյութը՝ կաշին համապատասխանում էր ոճավորմանը և բովանդակությանը. հարկ է նշել, որ խումբը ընտրել էր մատենագրությունը , գիրքը ձեռագիր տարբերակով էր:

Երկրորդ խումբը դրական գնահատվեց, քանի որ նյութը համապատասխանում էր բովանդակությանը, սակայն ոճավորումը փոքր –ինչ անհամապատասխան էր, կային գունային արտահայտիչ տարբերություններ: Երրորդ խումբը ևս դրական գնահատվեց նույն սկզբունքով: Բացասական գնահատական ոչ մի խումբ չստացավ, քանի որ տվյալ մեթոդը պետք է ոգևորի աշակերտներին իրենց կատարած աշխատանքը ավելի լավը դարձնելու գործում, այլ ոչ թե ունենա հակառակ ազդեցությունը:

ՀաջորդիվՆերկայացվում է բովանդակահեն մեթոդի օգնությամբ կազմակերպված դասի նկարագիրը: Ինչպես նախորդ գլխում արդեն նշվել է, CLIL-ի՝Content and language integrated learning- գլխավոր նպատակներն են ներկայացնել ավելի լայն մշակութային համատեքստ, բարելավել ընդհանուր և հատուկ լեզվական իմացությունը, պատրաստվել հետագա ուսումնասիրություններին և/կամ աշխատանքային կյանքին, մշակել բազմալեզու հետաքրքրություններ և վերաբերմունք, բարձրացնել աշակերտի մոտիվացիան: Այս իսկ պատճառով տվյալ մեթոդի արդյունավետ կիրառման համար որպես նորարական մոտեցում օգտագործել ենք հայկական արտադրության “Art” սեղանի խաղերը: “Arvest”-ը խաղ է բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրված

են արվեստով, ինչպես նաև այն հնարավություն է տալիս հասկանալ յուրաքանչյուր ստեղծագործության նախապատմությունը, վերլուծել արվեստը, սովորել անվանի գեղանկարիչների մասին, տարբերակել գունապնակները և այլն: Այն ստեղծվել է զվարճանքը կրթության մեջ մտցնելու համար, ինչպես նաև ցանկացած աշակերտի այս կամ այն հմտություններն առավել ընդգծելու համար: Ստորևներկայացվումէ “Art”-ի միջոցով անգլերենիբովանդակահենուսուցմանմեթոդովիրականացվողդասիպլանը:

Թեմա՝“Are You Fond of Art?”

Դասարան՝9

Դասիտեսակը՝ CLIL (ինտեգրված)

Դասի նպատակը՝

- ներմուծել հայ և համաշխարհային կերպարվեստի մասին ինֆորմացված լինելու կարևորության գաղափարը,
- ամրապնդել թեմային համապատասխանող բերականական նյութը,
- ընդլայնել և ամրապնդել «Արվեստ» թեմային վերաբերող թեմատիկ բառապաշարը,
- խթանել թանգարաններ և պատկերասրահներ այցելությանը,
- զարգացնել թեմայի շուրջ հաղորդակցական այնպիսի կարողություններ, ինչպիսիք են ունկնդրումը, մենախոսությունը,
- զարգացնել նկարագրական հմտությունները արվեստի համատեքստում և պատրաստել աշակերտին տվյալ թեմայով հետագա քննարկումներին,
- խթանել աշակերտների առողջ մրցակցության ձևավորմանը:

Միջառարկայականկապեր՝Կերպարվեստ, հայ անվանի գեղանկարիչներ

Դասի ընթացքում կիրառվող մեթոդները և իրականացման եղանակները՝ նկարագրական, պատմողական, բացատրական-զննական, թիմային աշխատանք, ինքնուրույն ճանաչողական գործունեություն, մեջբերումներ

Անհրաժեշտ պարագաներ՝ «Արվեստ» խաղային քարտեր

Ակնկալվող վերջնարդյունքներ.

Թեմայի ավարտին աշակերտը պետք է իմանա՝

- թեմային առնչվող բառապաշարը,
- տրված բերականական նյութը,
- ներառված գեղանկարիչների կյանքի և ստեղծագործությունների մասին որոշ մանրամասներ,

Թեմայի ավարտին աշակերտը պետք է կարողանա՝

- կատարել ինքնուրույն հետազոտություն և հաղորդակից դառնալ ինչպես սեփական, այնպես էլ համաշխարհային մշակույթին,
- կիսվել կատարած հետազոտության արդյունքում թեռ բերած գիտելիքներով,
- յուրացրած բառապաշարը կիրառել արվեստի գործերի պատկերավոր նկարագրման համար,
- կիրառել անգլերենը որպես գործիք՝ առավել լայն հաղորդակցական հմտություններ ձեռք բերելու համար:

Խաղի նկարագրությունը.

Art խաղը ներառում է 18-20-րդ դարերի 12 հայ հանրահանաչ գեղանկարիչների երկուական աշխատանքներ ուղղանկյուն քարտերի վրա: Քարտերից 24-ում ամբողջական կտավներն են, իսկ մյուս 24-ը close-up տարբերակներ են: Աշակերտները նախքան դասը բաժանվում են երկու թիմի, որտեղ աշակերտներից յուրաքանչյուրը պետք է սովորի գեղանկարիչներից երկուսի մասին համառոտ տեղեկատվություն: Խաղի սկզբում քարտերից 24 ամբողջականները 2-ական բաժանվում են աշակերտներին, իսկ մյուս 24-ը դարձերես դրվում են սեղանին: Այնուհետև ամեն թիմից մեկական մասնակից մոտենում է սեղանին, վերցնում մեկական քարտ և սկսում նկարագրել իր թիմին: Եթե համապատասխան քարտը իր թիմի մոտ է, և թիմը կռահում է ճիշտ պատասխանը, ապա վաստակում են 10 միավոր: Եթե քարտը հակառակորդ թիմի մոտ է, ապա դարձյալ կարելի է ձեռք բերել միավոր՝ ներկայացնելով ունեցած գիտելիքները տվյալ գեղանկարչի մասին և դարձյալ վաստակելով 10 միավոր. հակառակ դեպքում թիմը միավոր չի ստանում, իսկ հակառակորդ թիմը հնարավորություն է ստանում պատասխանել և թիմի համար ձեռք բերել հավելյալ 5 միավոր: Այսպիսով, ներկայացվում են բոլոր քարտերը և առավելագույն միավոր հավաքած թիմը հաղթում է:

Դասի ընթացքը՝

Դասի առաջնային փուլում աշակերտներին ողջունելուց և կազմակերպչական մասն ապահովելուց հետո առաջադրվեց Կոնֆուցիոսի հետևյալ միտքը՝ կարճ քննարկման և թեմային հնարավորինս ինտեգրելու համար. “Everything has its beauty, but not everyone sees it”: Այս փուլում աշակերտներն ազատ էին իրենց կարծիքներն արտահայտելու և փոքրիկ բանավեճ սկսելու. սա իր հերթին հնարավորություն տվեց վերհիշել դասի գաղափարը և գործածել նախորդ դասերի ընթացքում ձեռք բերած բառապաշարը:

Հաջորդ փուլում աշակերտներին հիշեցվեց՝ ինչպիսին էին թիմերի կազմերը և բացատրվեցին խաղի կանոնները: Բաժանվեցին խաղաքարտերը, և աշակերտները սկսեցին մեկական մոտենալ սեղանին և նկարագրել իրենց վերցրած քարտի պատկերները: Շատ կարևոր է նշել, որ այս առաջադրանքը միտված էր նաև խթանելուն Present Simple, Present Continuous ժամանակաձևերի և մոդալ բայերի

ճշգրիտ գործածմանը, ինչպես նաև թեմայի վերաբերյալ նախորդ դասերին սովորած բառաշարը ակտիվ գործածության մեջ դնելուն: Աշակերտները խաղի բուն առաջադրանքները կատարելուց բացի հնարավորություն ունեին նաև ուղղել իրենց թիմակից դասընկերների կատարած թիրախային քերականական սխալները, ինչն էլ թույլ տվեց միավորներ չկորցնել:

Դասի ավարտին կատարվեց արդյունքների ամփոփում և գնահատում: Գնահատելիս հիմք ընդունեցինք ինչպես աշակերտների հավաքած միավորները, այնպես էլ քերականական նյութի ճշգրիտ կիրառումը: Այսպիսով, կազմվել էր գնահատման հետևյալ սանդղակը.

1. խաղի պահանջներ կատարում – 5 միավոր. առավելագույն՝ 5 միավոր խաղի արդյունքում 97-120, 4 միավոր՝ 73-96, 3 միավոր՝ 49-72, 2 միավոր՝ 25-48, 1 միավոր՝ 10-24 միավոր հավաքելու դեպքում,
2. թիրախային քերականական նյութի ճշգրիտ կիրառում – 5 միավոր:

Ընդհանուր առմամբ երկու խմբերն էլ շատ լավ հանդես եկան՝ ոչ միայն կատարելով խաղի պահանջները, այլև ցուցադրելով բարձր մրցակցային ոգի և անհնախադեպ ոգևորություն թեմայի վերաբերյալ: Առաջին խմբի անդամները գնահատվեցին գերազանց, քանի որ թիմային աշխատանքի արդյունքում կարողացել էին վաստակել 113 միավոր և գրեթե անսխալ խոսքով հանդես եկել, իսկ երկրորդ խումբը գնահատվեց լավ՝ վաստակելով 76 միավոր և թույլ տալով քերականական որոշ սխալներ: Որպես տնային առաջադրանք հանձնարարվեց աշակերտների կողմից նմանատիպ քարտերի ստեղծումը՝ համաշխարհային գեղանկարիչների կամ արվեստի այլ ճյուղի ներկայացուցիչների մասնակցությամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշակերտների սովորելու մոտիվացիան ցանկացած ճանաչողական գործընթացի հիմքն է: Ինչ վերաբերում է դպրոցում օտար լեզուներ սովորելուն, ապա արժե հասկանալ, որ աշակերտների գիտակցված մոտեցումը կրթությանը և ուսուցչի անհատական մոտեցումը աշակերտների կարողություններին, առանցքային են աշակերտի մոտ ուսուցանվող առարկայի նկատմամբ դրական ասոցիացիաներ ձևավորելու համար:

Այսպիսով, ուսուցման գործընթացում դիտարկելով մեթոդները՝ նախագծահեն, բովանդակահեն, կարող եմ փաստել այն մասին, որ կիրառելով վերը նշված մեթոդները աշակերտներին պետք է խրախուսել, մղել ավելի շատ շփման և ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ աշակերտները չեն վախենա կատարել բերականական սխալներ, երբ նրանք օգտագործում են անգլերենը հաղորդակցական նպատակով: Այդ մեթոդները զարգացնում են աշակերտների բնական և ստեղծարար մտածողությունը՝ տալով ինքնուրույն աշխատելու հնարավորություն և ուսուցման գործընթացքում շեշտը միշտ դրվում է աշակերտների ինքնաբուխության վրա:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով մեթոդների միջոցով ներկայացված դասերը՝ հարկ է ուշադրություն դարձնել մի քանի առանցքային կետերի՝ նախ պետք է վստահ լինել, թե որքանով են դիպուկ և իրատեսական ընտրված նպատակները, և արդյո՞ք դրանք նույնքան ցանկալի և հասկանալի են աշակերտների համար ևս, ստուգել, թե աշակերտները որքանով են ներգրավված տվյալ թեմայի մեջ, և որ ավելի կարևոր է, որքանով է նրանց հետաքրքրում օտար լեզուն տվյալ թեմայի շրջանակներում: Մեթոդները կիրառելիս շատ կարևոր է փորձել հնարավոր բոլոր կողմերով ցույց տալ տվյալ թեմայի և քննարկվող նյութերի բովանդակային տարրն ու անհրաժեշտությունը իրական կյանքում և անհրաժեշտության դեպքում պասիվ աջակցություն ցուցաբերել առաջադրանքների կատարման մնացած փուլերում՝ լինելով վստահ, որ աշակերտները ճիշտ ուղեծրի վրա են: Վերջնական փուլում կատարել գնահատում և ապահովել հետադարձ կապ՝ մեթոդի արդյունավետությունը ստուգելու համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ананьев Б.Г. Человек как предмет познания. СП.: Питер, 2001. 272 с.
2. https://www.moj.am/storage/uploads/00.Ardir_6.pdf
3. https://nsportal.ru/shkola/tekhnologiya/library/2019/08/20/sovershenstvovanie-professionalnyh-kompetentsiy-uchitelya-kak

ՀԱՎԵԼՎԱԾ

Դասապլան-1

Ուսուցիչ՝Կարինե Հակոբյան

Առարկա՝	անգլերեն	Ամսաթիվ	7-ից մարտի 18-ը	Կիսամյակ	2	Դասարան	8
Թեմա՝	Cultural palette						
Օգտագործվող նյութեր՝	Համացանց, պաստառներ, գրքեր, հանրագիտարաններ,						
Դասի նպատակը՝	Նախագծահեն մեթոդի կիրառումը լեզվական հմտությունները խթանելու նպատակով						
Վերջնարդյունքները	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ Աշակերտները կկարողանան. Կատարել թիմային աշխատանք Ստեղծագործել և իրենց աշխատանքի արդյունքները ներկայացնել Կատարել ինքնուրույն լեզվական հետազոտություն						
Գործողությունները(ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ		Կիրառվողմեթոդ (ներ) **PBL**			

5 րոպե-սկիզբ	Բացել դասագրքերը, պատրաստվել նոր դասին: Ներկայացնել տնային աշխատանքները	Ողջունել դասարանին, ն/բ: Ստուգել տնային աշխատանքները, բացատրել անհասկանալի մասերը	
10 րոպե-ընթացք	Պատասխանել հարցերին Փոխադարձ հարցեր տալ,	Տալ հարցադրումներ, աշակերտներին ներգրավել դասապրոցեսին Տալ ուղղորդող հարցադրումներ	Հարցադրումների մեթոդ
	Կատարել թիմերի բաժանում Առաջադրանքների տրամադրում	Հետևել կատարվող աշխատանքներին, կատարել շտկումներ	
15 րոպե		Բաժանել թեստերը, բացատրել հանձնարարությունները Հետևել կատարվող աշխատանքներին, տրամադրել անհրաժեշտության դեպքում առաջ մղող անհատական բանավոր, գրավոր հետադարձ կապ:	

12բոպե		Նոր թեմայի հաղորդում, բանավոր հետադարձ կապի տրամադրում, անհասկանալի հատվածների բացատրություն Գնահատում և տնային աշխատանքի հանձնարարում	Կարճ դասախոսություն՝ստեղծելով միջառարկայական կապ(հայոց լեզու)
3բոպե-ավարտ			
Տնային աշխատանք	Ինքնուրույն հետազոտություն		

Դասապլան -2

Առարկա՝	Անգլերեն	Ամսաթիվ	7 -ից մարտի 18-ը	Կիսամյակ	2	Դասարան	9
Թեմա՝	ART						
Օգտագործվող նյութեր՝	Համացանց, պաստառներ, գրքեր, հանրագիտարաններ,						
Դասի նպատակը՝	Բովանդակահեն մեթոդի կիրառումը լեզվական հմտությունները խթանելու նպատակով						
		Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ					

Վերջնարդյունքները	Աշակերտները կկարողանան. Կատարել թիմային աշխատանք Ստեղծագործել և իրենց աշխատանքի արդյունքները ներկայացնել Կատարել ինքնուրույն լեզվական հետազոտություն		
Գործողությունները(ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Կիրառվողմեթոդ (ներ) **CLIL**
5րոպե-սկիզբ	Բացել դասագրքերը, պատրաստվել նոր դասին: Ներկայացնել տնային աշխատանքները	Ողջունել դասարանին, ն/բ: Ստուգել տնային աշխատանքները, բացատրել անհասկանալի մասերը	
10րոպե-ընթացք	Պատասխանել հարցերին Փոխադարձ հարցեր տալ,	Տալ հարցադրումներ, աշակերտներին ներգրավել դասապրոցեսին Տալ ուղղորդող հարցադրումներ	Հարցադրումների մեթոդ
	Կատարել թիմերի բաժանում Առաջադրանքների տրամադրում	Հետևել կատարվող աշխատանքներին, կատարել շտկումներ	

15 րոպե	Բաժանել թեստերը, բացատրել հանձնարարությունները Հետևել կատարվող աշխատանքներին, տրամադրել անհրաժեշտության դեպքում առաջ մղող անհատական բանավոր, գրավոր հետադարձ կապ:	
12 րոպե	Նոր թեմայի հաղորդում, բանավոր հետադարձ կապի տրամադրում, անհասկանալի հատվածների բացատրություն Գնահատում և տնային աշխատանքի հանձնարարում	Կարճ դասախոսություն՝ստեղծելով միջառարկայական կապ(հայոց լեզու)
3 րոպե-ավարտ		
Տնային աշխատանք	Ինքնուրույն հետազոտություն	